Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Պաղդասարյան

4038

891.995
Պ-17

Ձ91-99մ
Պ-17




ԵՒ

# ԲԱՐԵԿԱՄ

## ՄԱՆԿԱՆՑ

---

## ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

---

—

2004

Ի ԴԻՄԱՑ

ՕԺԱՆԴԱԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

Գ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

—

Կ. ՊՈԼԻՍ ՎԷԶԻՐ–ԽԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Գ. ԹՕՁԼԵԱՆՑ
— 1872 —

2004
3710
գ 41

## ԱԶՆԻՒ ԾԱՂԿԱՀԱՍԱԿ ՏՂԱՅՔ ԵՒ ՕՐԻՈՐԴՔ

Ահա տարին իր շրջանն կաւարտէ, ժամանակի հոսանքն յովկիանոսն Յաւիտենին մօտ է և քիչ օրերէն Նոր Տարւոյ մը բարեմաղթութիւններն միմեանց պիտի ընենք։

Սրտի ցաւօք նկատելով որ Կաղանդին օրն Ձեր Ծնողաց և Ուսուցիչներուն մանկական բարեմաղթութիւններն ըրած օրերնիդ Ձեր ձեռքը հնաձև Օրացոյց մը կամ պատկեր մը կուտան, և դուք ալ քանի մը ժամ կամ օր նորա վերայ ուրախանալէ զկնի առանց օգուտ մը քաղած ըլլալու մէկ կողմ կնետէք զանոնք, աշխատեցայ այնպիսի Նուէր մը պատրաստել որ ոչ թէ լոկ քանի մի օր կամ ամիս այլ ձեր բոլոր կենացը համար անկից փոքրիկ օգուտ մը քաղած ըլլաք։

Ուստի եթէ Ձեր ազնիւ Ծնողք և Ուսուցիչք բարեհաճին այս մեր փոքրիկ

աշխատութենէն ձեզի նուէր մ'ընել ուշադրութեամբ կարդայէք զանի և եթէ ջանաք անկից օգուտ մը քաղել, յայնժամ պսակեալ կը համարիմ աշխատութիւնը,

Ձեր բարեկամութեանը
ցանկացող բարեկամնիդ
Գ. Պաղտասարեան





## ՎԱՐՁՔ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ

Վերոյգրեալ պատկերը բազում տըղայոց ծանօթ է. նա մեր Նախահօրն Ադամայ և Նախամօրն Եւայի անհնազանդութեանը համար ընդունած պատիժն կներկայացնէ: Հրեշտակն զանոնք Եդեմեան Դրախտէն դուրս կաքսորէ, երջանկութեան վայրէն թշուառութեան կմատնէ, այո՛ զանոնք մահուան հրեշտակին ձեռքը կյանձնէ:

Ահա այս է անհնազանդութեան պտուղը, և ազնիւ տղայք գիտցած ըլլաք որ ժամանակին անցնելովը այս կանոնը չըփոխուեցաւ. ոչ, անհնազանդութիւնը միշտ իւր պատիժը պիտի կրէ. սա անտարակուսելի ճշմարտութիւն մ'է. ուստի ձեր մանկական ծաղիկ հասակին մէջ սորվեցէք նախ Աստուծոյ և ապա ձեր ծնողացը և ուսուցիչներուն հնազանդ ըլլալ:

Ահա ձեզի անհնազանդութեան յառաջ բերած դառն պտուղներէն մէկուն պատմութիւնը ընեմ:

Երկու եղբայրներ կային, մին 11 և միւսն 10 տարեկան: Հայրերնին վաճառական ըլլալով պարտաւորեալ էր յաճախ ձիով ճամբորդել. և աւազակաց յարձակմանցը դիմադրելու համար զոյգ մը լեցուած ատրճանակ հետը կկրէր, որոնք տուն եկած ատենը սովորաբար պարպելով պատն 'ի վար կկախէր: Սակայն և այնպէս տղայոց սաստիկ պատ-



ուէր տար հրազէնից հետ երբէք չզբօսնուլ զի այն տեսակ զուարճութիւնք ընդհանրապէս բազում դժբախտ արկածներու պատճառ են եղած:

Արդ հայրերնին անգամ մը ճամբորդութենէ վերադառնալով և ըստ որում քանի մի օրէն վերստին պիտի ճամբայ ելլար ատրճանակներն առանց պարպելու սենեակը դրաւ, բոլորովին անհոգ լինելով որ տղայքը զանի ձեռքերնին կառնեն զի արդէն խստիւ արգիլած էր:

Սակայն գիտէ՞ք ի՞նչ պատահեցաւ. հետեւեալ առաւօտուն երբ հայրը շուկան գնաց, երկու եղբարք սենեակին մէջ կխաղային. ատրճանակները սեղանին վրայ դրուած էին:

—Ոն— ըսաւ մեծ տղան փոքրին— զինուորական կրթութիւն ընենք— ատրճանակներուն մին առնելով և միւսը փոքրիկ եղբօրն երկնցնելով:

— Ի՞նչ. չե՞ս գիտեր որ արգիլեալ է ատրճանակները ձեռքերնիս առնել— ըսաւ պզտիկը:

—Բարի—ըսաւ մեծը—բայց նոքա անշուշտ պարպուած են, ես լաւ գիտեմ կրակ տալու կերպը—զայս ըսելով երկու ատրճանակներուն ալ հրհանը (չախմաք) լարելով մին եղբօրը ձեռքը տուաւ։

—Հիմայ— շարունակեց մեծը— լաւ զգուշութիւն ըրէ իմ հրամանացս :—

Երկուքն ալ դէմ առ դէմ կանգնած էին հրաղէններն ձեռքերնին բռնած : Մեծ եղբայրը ինքզինքը զօրապետ ձեւացնելով սկսաւ իր հրամանները տալ :—

—Պատրա՛ստ—Կ՚առ՛օթ—Կրա՛կ :—

Այս բառիս վրայ երկուքն ալ ՚ի միասին կրակեցին, երկուքն ալ յերկիր տապալեցան և իրենց արեանը մէջ թաւալիլ սկսան : Մայրն ատրճանակին ձայնն լսելով սարսափելով սենեակը վազեց. բայց ինչ տեսարան. շնչասպառ որդւոցը վրայ ինկաւ. նոքա իրենց վերջին շունչն փչեցին։

Անհնազանդութեան պտուղը միշտ դառն է և բազում անգամ սարսափելի ուստի սորվեցէք հնազանդիլ :





ՋԱՅԼԱՄ

Ես ջայլամն աշխարհիս թռչնոց հըսկան եմ, և ամենաբարձր մարդէ մը ալ մեծ եմ : և 60—70 օգգաի մօտ ծանրութիւն ունիմ : Միայն նաև հաւ-

կիթներս կ'ուտուին, որոնք տղու գլխու չափ ըլլալով և 3—4 օդգա կ'շուելով կրնան երկու երեք հոգի կշտացնել։ Տարին 30 կամ 40 հաւկիթ կ'ածեմ։ Բնակութիւնս Ափրիկէի, Հնդկաստանի և Արաբիոյ աներեր ու անբնակ անապատներն են ուր շատ քիչ անգամ մարդ կանցնի և յիրաւի որքան ուրախ կ'ըլլայի եթէ երբէք այս թշուառականներուն երեսն չտեսնէի, քանզի երբ քովս մօտենան կամ զիս հաւկիթներէս կ'զրկեն, կամ ձագերս կ'յափշտակեն և կամ զիս կսպաննեն։ Օտարներէն կրածնեղութիւններս մէկ կողմ թողունք։

Կերակուրս է խոտ, սերմ, ընկոյզ և այլ տեսակ պտուղներ։ Ասանցմէ քիչ անգամ յագենալով ստամոքսս քարերով, փայտի կտորներով, ոսկորներով, չուաններով, կաշիով, երկաթով, կապարով, և ապակիով կ'բեռնաւորեմ։ Շատ անգամ ալ այնքան կ'խեղդուիմ որ կրակ կուլ կ'տամ. սակայն ինծի քիչ նե-



ղութիւն չպատճառեր։

Եթէ գլուխս փորձանք մը չպատահի ընդհանրապէս 60—70 տարեկան կ'ըլլամ։ Իսկ եթէ զիս բռնելով հեծնելու գործածուիմ կամ փետուրներս յափշտակեն և ուրիշ կերպ կերպ տանջանաց զիս ենթարկեն այս տարիքս կէսին անգամ չեմ հասնիր։ Վրաս հեծնալէն շատ անվախ Արաբներն զիս կառքերնուն ալ կ'լծեն, քանզի խիստ զօրեղ և դիւրաշարժ եմ. և ժամը 9 կամ 10 մղոն կրնամ երթալ կառքով և հեծեալովս. սակայն վա՜յ այն Արաբացիին որ արագ հեծնելու վարժուած չէ քանզի արագութենէն ոչ կրնայ լսել ոչ տեսնել ոչ ալ շունչ առնուլ։

Ջիու վրայ նստող հեծելազօրի չափ եմ և ուղտ կոչուած կենդանւոյն խիստ շատ նմանութիւն ունիմ, գլուխս սագի նման է, սրունքներս կարճ են, ծղուե սուր, ականջիս ծակերն բաց են, աչացս վերի թարթերն շարժուն են և մարդու

նման երկար թարթիչներ ունիմ ։ Վիզս խիստ երկար ու բարակ է և մարմնոյս միւս մասերուն նման հաստ ու ճերմակ մազերով ծածկեալ է ։ Թևերուս ու պո-չիս վրայի փետուրներն գեղեցիկ, սպիտակ և երբեմն սև ու թուխ գոյն մ'ունին, և անոնց համար է որ Արաբներէն այնքան տանջանք կ'կրեմ ։ Այս փետուրներն Եւ-րոպայուց կ'ծախեն, նոքա ալ զանոնք գլ-խարկնուն վրայ կխօթեն, հովահար, վր-ձին և զարդի գործիքներ կ'շինեն ։ Սև փետուրներս սպիտակներէն թանկագին են ։ Ոտքերս անմազ և խիստ երկար են երկու մատ կամ ճանկ ունիմ, թռչիլ չեմ կրնար, զի թևերս փոքր են և մար-մինս խիստ ծանր, սակայն խիստ արագ կարող եմ ընթանալ և ոչ մարդ, ոչ շուն, ոչ ձի կրնայ ետևէս հասնիլ ։ Սակայն և այնպէս խորագէտ Արաբացիք կ'յաջողին զիս բռնել ։ Հաւկիթներուս գալով հա-ւատա որ տղու մը գլխու չափ մեծ են, վրան բիծերով և ճերմակի մօտ գոյնով ։



Խիստ համեղ են անոնք և քարի նման կարծր կեղևներէն անօթներ կը շինուին ։ Գաղղիացիք և Հոլանտացիք զանոնք Եւ-րոպայ տանելով թանգարանաց կ'ծախեն ։ Հատը 10 դահեկան կարժէ և եթէ խիստ գեղեցիկ ըլլայ աւելի ։ Ածած 30 կամ 40 հաւկիթներէս հազիւ թէ տարին ա-նոնց չորրորդ մասն կ'թխսեմ, քանզի շա-տերն կ'յափշտակեն և շատերն ալ ձա-գերուս կերակուր ըլլալու համար կ'ածեմ ։ Թխսածներուս շատերն ալ սովամահ կը կորնչին, կամ վատ Արաբացիներէն փա-խած առեններին կսպաննուին ։ Հաւկիթ-ներս զատ զատ իրարու հետէ տաք աւա-զին մէջ կ'թաղեմ, եթէ չ'հալածուիմ մէկ քանիին վրայ անձամբ կ'նստիմ, իսկ միւսներն աւազին մէջ կ'թաղեմ ։

Սակայն մի կարծէք թէ զիս հալա-ծողներն անպատիժ կ'թողում. անոնց ձեռ-քերն ու ոտքն կ'կոտրեմ, ձիուն և շանը փորը կ'պատռեմ ։ Հալածիչներս զիս քա-նի մ'օր կ'պաշարեն և անօթի կ'թողուն

և կ՚ստիպեն զիս որ գլուխս աւազի մէջ խօթեմ ; յայնժամ զիս լուծելով գերութեան կ՚տանին : Թէև գերութեանս մէջ ինծի լաւ խնամք կ՚տանին և ուտելիք ու զբօսանք առատապէս կ՚վայելեմ , սակայն պէտք է թողում որ փետուրներս հանել տամ , այո՛ , որ զիս սպաննեն ու կաշիէս հանդերձ շինեն : Շատ քիչ կ՚պատահի որ ողջ ջայլամ մը Եւրոպայ տարուի :







ՇՈՒՆ

Շանը հաւատարմութիւնը հանրածանօթ է , հոս զայս ապացուցանող համառօտ պատմութիւն մը դնենք : Վաճառական մը իր հաւատարիմ շանը հետ ընկերացած ճամբորդութիւն կ՚ըներ : Հոգնած ըլլալով ծառի մը հովանոյն տակ կպառկի և քանի մի ժամ քնանալէն ե-

ու ճամբան կշարունակէ ։ Շունը կսկսի հաչել և յայս և յայն կոյս վազել , վաճառականը զայս բանի մը տեղ չդներ , և ճամբան կշարունակէ ։ Հաւատարիմ կենդանին կհաչէ , ետ կդառնայ , նորէն տիրոջը քով կուգայ և ամէն շարժումներովը հասկցնել կուզէ որ տէրը ետ դառնայ , սակայն ՚ի զուր ։ Կենդանին տեսնելով որ տէրը իր շարժումները չըհասկնար կսկսի նորա հանդերձներէն խածնելով զանի ետ դառնալ ստիպել , սակայն նա խորհելով որ շունը կատաղած է և զինքը վնասէ պիտի ատրճանակովը կսպաննէ զանի ։

Թշուառ կենդանին արիւն լուայ եղած ետ կդառնայ իսկ վաճառականը իր ճամբան յառաջ տանի ։ Քիչ մը ետքը ուզելով ժամացոյցն նայել ձեռքը գրպանը կդնէ ; բայց ի՞նչպէս կապշի երբ զանի հոն չգտներ ։ Կփութայ պառկած տեղը վերադառնալ , հոն հասնելով ի՞նչ տեսարան կներկայանայ աչացն առջին ։



Արիւն լուայ կենդանին տիրոջը ժամացոյցին քով ինկած պառկած էր և կպաշտպաներ զանի , Երբ տէրոջը հոն հասնիլն և զանիկայ առնելն տեսաւ ուրախութեամբ պոչն շարժելով վերջին շունչն փչեց ։

——



ԵՐԵՍԷ ԹՈՂԵԱԼ ԾՆՈՂՔ

Վերի պատկերն Ափրիկեցի կուապաշտ և վայրի ժողովրդոց վատ և պժգալի սովորութիւններէն մին կներկայացունէ :

Երբ նոցա ծնողքներն ծերանան որդայք —Հայր, դուն ա՛լ աշխարհիս վրայ ըստ բաւականին ապրեցար—կըսեն , և



զանի բռնելով անբնակ տեղ մը կտանին և ծառի մը հովանւոյն՝ տակ նստեցնելով կթողուն որ սովամահ կորնչի կամ վայրի գազանաց որս լինի :

Որդիք, յիշեցէք որ ձեր ծնողքներն ո՛րքան նեղութիւն յանձն առին զձեզ մեծցնելու, սնուցանելու և կրթելու համար . կընա՞ք զանոնք իրենց ծերութեան անկարող վիճակին մէջ երեսի վրայ թողուլ և զանէ նոցա օրական կերակուրն սիրով չհայթայթել : Աստուած արդար չի կրնար ըլլալ եթէ այս տեսակ որդիք անպատիժ թողու :

Տղուն մէկը սովորութիւն ունէր մաքրիկ թռչուններն բռնել և լեզուներն կտրելով թող տալ : Սակայն ինչ պատահեցաւ . ինքն ալ մեծնալով 7 տղայոց հայր եղաւ , նոքա բոլորն ալ համր էին. և դժբախտ մարդը բոլոր կենացը մէջ իր որդւոցը բերնէն այն քաղցր և սիրելի «հայր» բառը երբէք չլսեց : Այո՛, Աստուած արդար է :

3710

## ԿԱՊԻԿՆ

Ատենօք հարուստ մարդ մը կար, սակայն այնչափ ագահ էր որ երբէք աղքատի մը ստակ մ'անգամ չէր տար: Անիկայ կապիկ մ'առած էր շատ աժան գնով, շատ սուղ ծախելու յուսով: Օր մը այս քարասիրտ ագահը տունէն բացակայ էր, կապիկը դրացիներէն մարդ մը տեսաւ, բարեսիրտ մարդ մը, որ պատուհանէն 20 փարանոց դրամ մը կ'նետէր անցորդ աղքատի մը: Զայս տեսնելով կապիկը ինքն ալ իր տիրոջն արկղը բանալով որչափ դրամ որ կար, ոսկի, արծաթ ամենքն ալ պատուհանէն փողոցը նետեց, մարդկանց բազմութիւն մը վազելով կ'գային և կ'ժողվէին որչափ որ կրնային ժողվել: Արկղը արդէն պարպուած էր երբ ագահը վրայ հասնելով զարհուրանօք տեսաւ ինչ որ տեղի կ'ունենար:



«Ո՛հ, չար, անաշորոյն, անիծեալ կենդանի» պոռաց հեռուէն սպառնալից ձայնով մը և կռուփն ցուցնելով. բայց դրացին ըսաւ կատակի մարդուն. «Հանդարտէ բարեկամ. անտարակոյս յիմարութիւն է դրամները պատուհանէն դուրս նետելն, ինչպէս որ ըրաւ կապիկըդ. բայց և այնպէս զանոնք (դրամները) արկղին մէջ բանտարկելն ալ խելացութիւն չէ, ինչպէս որ կ'ընէք դուք»:

---

## ՔԱՀԱՆԱՅՆ ԵՒ ԲԺԻՇԿԸ

Քահանայ մը անաստուած բժիշկի մը պատահելով սա խօսակցութիւնը մէջերնին տեղի ունեցաւ: Բժիշկը. Դուք հոգւոց փրկութեանը համար կ'քարոզէք, այնպէս չէ՞:

Քահանայն. Անտարակոյս:

Բժիշկը. Հոգի տեսա՞ծ էք»

Քահանայն. Ոչ:

Բժիշկը. Հոգի լսա՞ծ էք։
Քահանայն. Ոչ։
Բժիշկը. Հոգի ճաշակա՞ծ էք։
Քահանայն. Ոչ։
Բժիշկը. Հոգի հոտոտա՞ծ էք։
Քահանայն. Ոչ։
Բժիշկը. Հոգի զգացա՞ծ էք։
Քահանայն. Անտարակոյս։

— Բարի—ըսաւ Բժիշկը—հինգ զգայարանաց չորսը հոգւոյ հաւթեանը դէմ են, և ուստի հոգի ըսուած բանը չկայ և լոկ երևակայութիւն է նա —։

Քահանայն հարցուց թէ արդեօք ինքը բժի՞շկ է։

Բժիշկը. Անտարակոյս։
Քահանայն. Ցաւ տեսած ունի՞ք։
Բժիշկը. Ոչ երբէք։
Քահանայն. Ցաւ լսա՞ծ էք։
Բժիշկը. Ոչ բնաւ։
Քահանայն. Ցաւ ճաշակա՞ծ էք։
Բժիշկը. Ոչ։
Քահանայն. Ցաւ հոտոտա՞ծ էք։



Բժիշկը. Ոչ։
Քահանայն. Ցաւ զգացա՞ծ էք։
Բժիշկը. Անտարակոյս։

— Բարի—ըսաւ Քահանայն—հաս ալ հինգ զգայարանքներէն չորսը ցաւի հու-թեան դէմ են, սակայն և այնպէս դուք գիտէք որ ցաւ ըսուած բանը կայ, ես ալ գիտեմ որ հոգի կայ —։



ՈՒՂՏ ԵՒ ՏԷՐՎԻՇ

Տէրվիշ մը անապատին մէջէն առանձին կճամբորդէր, յանկարծ երկու վաճառական գլխնցը ելան։

— Ուղտ մը կորսնցուցի՞ք — հարցուց նա վաճառականաց ։ —

— Այո՛, կորսնցուցինք — պատասխանեցին նոքա ։

— Նորա աջ աչքը կոյր չէ՞ր, և ձախ ոտքը կա՞ղ — ըսաւ Տէրվիշը ։

— Այո՛ — պատասխանեցին վաճառականք ։

— Նա և մէկ կողմը մեղր և միւսը ցորեն բեռնաւորեալ չէ՞ր ։ —

— Յիրաւի այնպէս էր — ըսին նոքա և աղաչեցին որ նորա որ կողմ երթալն իրենց ցոյց տայ ։

— Բարեկամք — ըսաւ Տէրվիշը — ես ձեր ուղտը ոչ տեսայ ոչ ալ նորա վերայ բան մը լսեցի բայց այն որ դուք ինձ ըսիք ։

— Ուղտին վրայի անդամանդներն ու՞ր են — ըսին վաճառականք ։ — Ես ոչ ձեր ուղտն ոչ ալ անդամանդներն տեսայ — ըսաւ Տէրվիշը ։ Վաճառականք զանի քաշելով դատաւորին առջին տարին, ուր երկար քննութենէ զկնի յանցանք



մը չկրցան ապացուցանել ։ Յայնժամ ամենքն նորա վրայ իբր կախարդ կնայէին. սակայն Տէրվիշը հանդարտութեամբ ըսաւ. — Առանձին և երկար կեանք անցուցած ըլլալով մինչև անդամ անապատին մէջ խորհրդածութեան արժան նիւթ կգտնեմ ։ Գիտէի որ ուղտ մը ճամբուն վրայէն կանցնիմ և որ նա տիրոջմէն փախեր էր զի ուղտի հետքերըն թէև տեսայ բայց մարդու ոտից նշաններն չտեսայ ։ Գիտէի որ կենդանին միականի էր, զի գիտեցի որ նորա հետքերն միայն մէկ կողմի խոտն կերուած էր ։ Կաղ ըլլալն հետքերուն մէկուն անորոշ ըլլալէն գիտէի, և ակռային մին ինկած ըլլալն ալ արածած տեղը եղած ակռային միջոցը չկերած ըլլալէն հասկցայ ։ Բեռան մեղր և ցորեան ըլլալն ալ աշխատասէր մրջիւններուն մէկ կողմը և մեղուաց միւս կողմը ժողուելէն իմացայ — ։



## ՇՈԳԵՆԱՒ

Միլլէր անուանեալ երիտասարդ մը բաւական ժամանակ կը մտածէր նաւերն անիւներու միջոցաւ քալեցնել. նա 1787 ին Յակոբոս Թէյլըրի օգնութեամբ առաջին փորձն ըրաւ, սակայն անիւներն դարձնող մարդոց քիչ ժամանակի մէջ ուժաթափ լինելնին տեսնելով Միլլէր առաջարկեց Թէյլըրի անիւներն դարձնելու համար այլ միջոցներ ձեռնարկել: Թէյլըր շոգեշարժ մեքենա-



յին վրայ խորհեցաւ և Սայմինկթօն անուամբ մեքենագործի մը հետ ընկերացած 1787 ին Հոկտեմբերի 14 ին փոքրիկ լճի մը վրայ առաջին շոգեշարժ նաւուն փորձն ըրին: Նաւը ժամը հինգ մղոն կերթար: Այս եղաւ այժմեան շոգենաւուց ծննդեան օրն:



## ԱՂՈՒԷՍ

Աղուէս եղբայր, քու կենացդ պատմութիւնը և խորամանկ հնարքներդ պատմէ մեզի սակայն չըլլայ որ սուտ և

կեղծ առասպելներ հետը խառնես :

— Ես Աղուէսս միջակ հասակի շան չափ եմ, և անոր խիստ մեծ նմանութիւն ունիմ, մազերս են գեղին կարմրագոյն. թէև սպիտակ և սև եղջայրներ ալ ունիմ : Պոչս է երկար և մազոտ : Բնակութիւնս է երկրիս հիւսիսային կողմերը գտնուած այրերն և խոռոչներն : Կերակուրս է հաւ, աղաւնի, սագ, բադ, թռչչուններ, փոքրիկ անասուններ, հաւկիթ, պանիր, կաթ և կարագ : Եթէ այս համեղ կերակուրներն չկարենամ ձեռք ձգել՝ մուկ, օձ, մողէս և գորտ ուտելով ալ գոհ կըլլամ։ Ա՛, մեղրն ու խաղողն ի՞նչ պատուական ուտելիք են. թէ և մեղուներն կամ պիծակներն գլխս խայթելով արիւնլուայ ընեն հոգս չեմ ըներ եթէ կտոր մը մեղր յափշտակեմ :

Ես ինձ համար բնակարան չեմ շիներ, այլ ուրիշ կենդանիներն իրենց տուներէն արտաքսելով հոն կը բնակիմ : Հոն ամեն տարի չորս կամ վեց ձագ կունե-



նամ, ծնելէն քանի մը շաբաթ ետև ղանոնք աղաւնիի և հաւի միսով, պանիրով և երկրագործներէն յափշտակած համեղ կերակուրներովս լաւ մը սնուցանեմ մինչև որ նոքա ալ զօրանալով հետս որսորդութեան ելլեն :

Բնակութիւնս գիւղերու մօտ կհաստատեմ, որպէս զի հաւերուն ճչելը, աքաղաղներուն խօսիլը, սագին և այլ թռչնոց և կենդանեաց աղաղակն լսել կարենամ : Յափշտակութեան և սպաննելու համար միայն գիշերներն դուրս կելլեմ : Նախ գիւղին տուներուն հետ լաւ կը ծանօթանամ, յետոյ հոն գտնուած կենդանեաց և թռչնոց վրայ լաւ տեղեկութիւն կստանամ, վերջը շուներուն բընակարաններն աչքէ կանցնեմ, ետքը պատերն ցանկերն և այլ ծածկեալ տեղերն լաւ աչքէ կանցնեմ և կփորձեմ թէ արդեօք կրնա՞մ նորա վրայէն ցատկել կամ ծակի մը մէջէն սողալով անցնիլ : Այս հետազօտութիւններէն ետև վերջապէս

գիշեր մը հանոցին վրայ յարձակելով գե-
մըս եղածն կապաննեմ և եթէ դէմս ար-
գելք մը չելլէ մինչև արշալոյս զանոնք
բոյնս կկրեմ : Այսպէս քանի մը օրուան
պաշարն գիշերուան մը մէջ կհաւաքեմ :

Նաև որոգայթի մէջ բռնուած թռ-
չուններն որսորդէն առաջ նշմարելով կը-
յարձակիմ և յափշտակելով բոյնս տա-
նիմ :

Բայց աւա՜ղ որ այս բրածներուս ալ միշտ
անպատիժ չեն թողուր, ոչ. որսորդ-
չուն և երկրագործք զիս շարունակ կհա-
լածեն, որոգայթներ լարեն և հրացան-
ներ կպարպեն վրաս : Սակայն վրաս քա-
նի որ զօրութիւն կայ գերի չեմ ըլլար : Իսկ
եթէ զիս բոյնիս մէջ պաշարեն կենս և
ձագուկներս առնելով ուրիշ գուռ մը փո-
րելով կփախչիմ թողելով որ որսորդն
զուր տեղը մուշտակիս համար սպասէ :
Երբեմն նախապատիւ համարիմ 15 օր
անօթի և ծարաւ անցնել քան թէ անձ-
նատուր ըլլալ : Շատ անգամ ալ ինքզինքս



մնացած կձևացնեմ և պատահութիւն մը
գտածիս պէս կփախչիմ :

Բոլոր կեանքս 20 տարիի չափ է . մոր-
թըս լաւ մուշտակ կըլլայ , և խիստ սուղ
կծախուի Եւրոպայի քանի մը քաղաքներն :

Գիտէ՞ք լուերս ինչպէ՞ս վրայէս կփախ-
ցընեմ . — Նախ բերանս փունջ մը խոտ
կառնեմ և ետ ետ երթալով կամաց կա-
մաց ջուրը կմտնամ , տաք չորածծի լու-
երն վզիս վրայ կժողուին , երբ ջուրն
հոն համնի քթիս վրայ կուգան և յետոյ
փունջին վրայ կապաստանին , ես ալ յան-
կարծ գլուխս ջուրին մէջ խօթելով փունջը
բերնէս կձգեմ և այս թշուառականներէն
կազատիմ : Ջուրը մտած ատեն խաչա-
փառներն պոչըս կխածնեն ես ալ կքա-
շեմ զանոնք և հետս կտանիմ սակայն
չեմ ախորժիր անոնց միսէն :



ԱՔԱՂԱՂ.

Այս վեհանձն և արթուն բնութեան տէր թռչունը ամեն տղայոց լաւ ծանօթ է սակայն ո՞րքան քիչերն նորա մեզի տուած օգտակար դասերուն վրայ կխորհին ։

Նա արթուն է և զգոյշ վտանգի տակ չըձգելու իր անձը և երբ պատահելու ըլլայ ամեն ջանք ՚ի գործ կդնէ ազատելու ։

Իրեններուն վրայ մեծ սէր և հոգ ունի նա և պատիւ կսեպէ նոցա համար իր կեանքը վտանգել ։



Առաւօտեան ամենականուխ ժամերուն ելլելով բոլոր ուժովը կերգէ և կըծանուցանէ որ քնոյ ատենն արդէն անցած է և աշխատանաց ժամանակն հասած ։

Ուստի թող տղայք աքաղաղ մը տեսած ատեննին խորհին և ջանան միշտ արթուն և զգուշըլլալ, իրենց ընկերներուն վրայ սէր ունենալ և նոցա բարելաւութեանը համար աշխատիլ, և նորա առաւօտեան երգն լսած ատեններն զգան թէ ծուլութիւնն է մայր չարեաց և ժիր ըլլալ ջանան ։

——

## ՈՐԴԻԱԿԱՆ ՍԷՐ

Չինաց օրէնքները կպահանջեն որ տէրութեան դրամն անհաւատարմութեամբ գործածողին ձեռքերն կտրուին : Անգամ մը պաշտօնեայ մը այս յանցանացը համար նոյն պատժոյն դատապարտուեցաւ : Նորա աղջիկն զայս լսելով կայսեր ներկայացաւ և իր հօրը համար աղերսեց :

— Ձեմ ուրանար—ըսաւ աղջիկը—վեհափառ տէր , որ հայրս պատժապարտ է, և ըստ օրինաց՝ նորա երկու ձեռքերն կտրելու է : Ահաւասիկ երկու ձեռք—ըսաւ նա ձեռքերն ցցնելով—այս՛, վեհափառ իշխան այս ձեռքերն իմ դժբախտ հօրս տեղը կուտամ. ասոնք ընտանեաց կերակուրն ճարելու անկարող լինելով սիրով կնուիրեմ որպէս զի հօրս ձեռքերն ազատին և եղբայրներս , քոյրերս , մայրս և զիս կերակրեն : Կայսրը այս աղջկանը սիրոյն համար հօրը յանցանքն ներեց :





## ԱՐՋ :

Բազում կենդանիներ ծնողաց լաւ օրինակ կրնան ըլլալ իրենց որդւոցը վրայ գորովագութ սէր ունենալու : Այսպէս է նաև Արջն :

Հիւսիսային Եւրոպիոյ մէջ մարդուն մէկը հրացանովը արջի մը ձագն կսպաննէ : Կենդանւոյն աղաղակն մայրն լսելով զայրացած որջէն դուրս կվազէ և կատաղաբար մարդուն վրայ կյարձակի , և երկուքը վայրի մենամարտութեան կսկսին: Բարեբախտաբար մարդուն քովը դանակ մը գտնուելով վարպետութեամբ մը կենդանւոյն փորն կխօթէ և այսպէս մահուան ձեռքէն հազիւ կազատի :



## ՍԱՐԴ

Սարդը անարգեալ կենդանի մ'է, շատերն մինչև անգամ անկէ կվախնան : Սակայն նա զարմանալի արարածոց մին է և աշխարհիս վերայ բազում օգուտ ունի:

Սարդը 8 աչք ունի, արդ. ասոր համար ոմանք կխորհին թէ մեծ ճարպիկութիւն չէ երբ նա իր շինած ոստայնին մէջ բռնուած ճանճերն մեկէն տեսնելով զանոնք կյափշտակէ : Սակայն բանը աչք ունենալուն վրայ չէ, զի, ըստ բնագիտաց, ճանճն հարիւրաւոր աչքեր ունի և սակայն իրեն համար լարուած որոգայթն



և նորա մէջ թաքեալ թշնամին չնշմարեր : Ի՞նչ կսովրինք ասկէց . կսովրինք թէ բաւական չէ լոկ աչք ունենալ այլ նաև զգուշութիւն, իմացողութիւն և վարպետութիւն ալ հարկաւոր է աշխարհիս մէջէն ապահովապէս անցնելու և փորձութեան մէջ չիյնալու համար :

Սարդին պատէ 'ի պատ շտապաւ հիւսած թելերն յիրաւի խիստ նուրբ են : Սակայն, ըստ բնագիտաց, այսպիսի պարզ աչօք հազիւ տեսանելի թել մը 6000 զատ զատ թելերէ կբաղկանայ : Ասի այս կերպով կշինուի :

Կենդանւոյն մարմնոյն վերայ 6 հատ ցցուած ծայրեր կան, անոնցմէ մէյմէկ թել դուրս կելլեն : Սակայն այս ծայրերէն ամէն մէկը հազարի չափ ծակեր ունի, որոնց թելերն երկննալով իրարու հետ կմիանան և հաստատուն թել մը կկազմեն այնպէս որ կենդանին փոթորիկի և որոտման ատեն ապահովութեամբ այս թելերէն շինուած տանը մէջ կբնակի :

Այս արարածոց լռիկ և անդուլ աշխատութեանը 'ի զննին կեցած ատեննիս կհիանանք նոցա ճարտարութեանը վերայ և առաւել Արարչին իմաստութեանը վրայ որ այսպիսի չնչին և փոքր մարմնոյ մը մէջ այսքան մեծ հրաշալիք է թաքուն պահած :

Իտալիոյ մէջ Թարանթէլ կոչուած ահռելի Սարդ մը կայ որ խածած անձը կթիւնաւորէ . նորա թոյնն մարդոյ վերայ տեսակ մը հոգեկան հիւանդութեան կը պատճառէ : Այս հիւանդութեանս միակ դարմանն է Թարանթէլլա կոչուած պարին նուագը : Հիւանդն զայս լսելով պարել սկսի և հոգնելով գետինը կիյնայ , որով հիւանդութենէն կբժշկուի :

Ամերիկայի մէջ Սարդ մը կայ . ասի ճանճերով գոհ չըլլալով թռչնոց վրայ կյարձակի , կբռնէ զանոնք , կսպաննէ , արիւնը կծծէ և հաւկիթները կուտէ :

— —



## ԸՆԿԵՐՆԵՐՈՒԴ ԻՆՉ ՈՐ ԸՆԵՍ ՈՒՐԻՇՆԵՐԷՆ ՆՈՅՆԸ ԳՏՆԵՍ

Աղքատ Գաղղիացի մը Գերմանիոյ գիւղերէն մէկուն մէջ յետին աստիճան խնայողութեամբ կեանք կվարէր :

Ձմեռնային ցուրտ առաւօտ մը նորա դէմ գիւղացի մը կելլէ որ փայտ կծախեր : Գաղղիացին կուզէ զայս գնել : Գերմանացին նորա արտասանած Գերմաներէնէն լաւ իմանալով որ օտարականի հետ է իր գործը խորհեցաւ այս պատեհութեամբ շահ մը ձեռք ձգել , և ուստի երեք Գաղղիական ոսկի պահանջեց : Գաղղիացին շատ ջանաց պահանջեալ գինէն նուազ վճարել բայց 'ի զուր : Վերջապէս կարօտութենէն հարկադրեալ համրեց երեք ոսկին և փայտը իր խրճիթը տարաւ :

Գերմանացին այժմ պարզուած կառքը նստաւ և այս բարեբախտութեանը

վերայ բերկրելով պանդոկ մը գնաց և ճաշ պատրաստել կուտար։ Քանի որ կերակուրն պատրաստուելու վերայ էր ինքը մնապարծութեամբ պանդոկապետին կպատմէր թէ ինչպէս կէս ոսկինոց փայտը Գաղղիացիի մը երեք ոսկիի ծախած է։

Արդ պանդոկապետը արդարասէր անձ մ'էր, և այս նղելութեանս վրայ իր դժգոհութիւնը յայտնեց։

— Փայտը իմս չէ՞ր մի — ըսաւ գիւղացին բարձրաձայն ծիծաղ մը փրցնելով — ուզած գինս կրնայի պահանջել, ոչ ոք իրաւունք ունի իմ գործիս խառնուելու։—

Պանդոկապետը լռեց. կերակուրը բերուեցաւ. գիւղացին կերաւ և բերանը սրբելէն զկնի հարցուց թէ ի՞նչ վճարելու է։

— Երեք ոսկի — պատասխանեց պանդոկապետը։

— Ի՛ն՛չ — ըսաւ գիւղացին, ականջներն



տնկելով — գաւաթ մը սուրճ, քիչ մը կարագ և հաց էր կերածս և երեք ոսկի՞ տամ։— Այո՛ — ըսաւ պանդոկապետը վեհ ձայնիւ — սուրճը, կարագը և հացը իմ ստացուածքս է և ուզած գինս պահանջելու իրաւունք ունիմ. երեք ոսկի է պարտքերնիդ և մինչև որ չվճարէք կառքն և ձին չեմ թողուր։—

Գիւղացին չիտակ դատաւորին գնաց և պանդոկապետին դէմ բողոքեց։ Դատաստանը բացուեցաւ և պանդոկապետն նղելութիւնն մի առ մի պատմեց. դատաւորք իրեն իրաւունք տուին։ Գիւղացին խոժոռ դիմօք երեք ոսկին պանդոկապետին ձեռքն դրաւ։

— Այս դրամն ես չեմ ուզեր — ըսաւ պանդոկապետը դատաւորին, — հաճեցէք այս ոսկիներուն մին առնել և գիւղացիին կէս ոսկին տալ, քանզի իր ըսածին մէջ Գաղղիացւոյն վաճառած փայտը այնքան միայն կարժէր. ճաշին համար վարձք չեմ պահանջեր։ Դատա-

ւորը պանդոկապետին ըսածին պէս ը-
րաւ և երկուք ու կէս ոսկին Գաղղիա-
ցւոյն վերադարձուց :

---



## ՕԳՆՈՒԹԻՒՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ

Ծնունդէն քանի մ'օր առաջ քահա-
նայ մը Ռուսիոյ մէջ գիւղէ մը տուն
կդառնար : Գիշերն վրայ հասաւ և նորա
հետ այնպիսի սաստիկ ցուրտ մը որ
դուրսը մնալն վտանգաւոր կթուէր : Քա-
հանայն մուշտակ մ'էր հագած և բալ-
խիրի մէջ սառնամանեաց վրայէն սըրն-
թաց սահելով կյառաջանար : Յանկարծ



ճամբուն վրայ բան մը նշմարելով բալ-
խիրն կեցուց զանի նկատելու համար և
տեսաւ որ զօրք մը ցուրտէն ուժաթափ
եղած գետինն էր ինկած և բոլոր ամե-
նայն երևոյթից մեռեալ էր : Բարի քա-
հանայն չուզելով զանի հոն թողուլ բալ-
խիրը առաւ զայն և ամենայն արարնօք
յետուղայ գիւղն հասաւ , և անձամբ կար-
գադրութիւններ ըրաւ մարածն վերա-
կենդանացներու համար : Երջանքերն ար-
սակունեցան զի զօրքն սկսաւ անդամներն
շարժել : Քահանայն գիւղացւոց փարձքն
տալէն և զինուորին համար աղդրամթո-
ղելէն զկնի տուն դարձաւ :

Զինուորն քիչ մը զօրութիւն ստանալէն
ետև սկսաւ ճամբան շարունակել պատ-
ճառ ցնելով թէ կարևոր նամակներ ունի
ժամանակին տեղն հասցնելու : Քիչ
առնէն քահանային գիւղը հասաւ . և
թէև խիստ ուշ էր սակայն չէր կրնար
իր ազատիչին շնորհակալութիւնը չյայտ-
նած ճամբան շարունակել :

Տանը մօտեցած ատենը տեսաւ որ սենեակին մէջ դեռ լոյս կար. լաւ ևս մօտենալով խառն 'ի խուռն աղաղակներ լսեց, դուանը քով անձապարեց բայց զանի փակեալ գտաւ: Առանց սպասելու պատուհանին քով անձապարեց և ներս նայելով տեսաւ որ քահանայն չորս զինեալ աւազակներէ շրջապատեալ էր որոնք նորա ձեռքերն և ոտքերն կկապէին և մահ կսպառնային եթէ դրամներն իրենց չյանձնէ: Զինուորն բանարարելով ներս մտաւ և հրացանովն աւազակաց մին սպաննեց: Միւս երեքը զինուորին վերայ յարձակեցան որոնց մին դաշոյնովն գետինը զարկաւ, միւս երկուքն զարհուրելով թողուցին զքահանայն և փախան: Եւ որքան զարմացաւ քահանայն երբ տեսաւ որ քանի մի ժամ առաջ մահուան ձեռքէն իր ազատած զինուորը այժմ զինքը աւազակաց ձեռքէն ազատելու միջոց եղաւ:



## ՇՈՂԳԱՄ

Աղքատ երկրագործի մը պարտէզին մէջ չափազանց մեծութեամբ շողգամ մը բուսաւ. տեսնողը նորա վրայ խիստ կը զարմանար: —Զանիկայ մեր վեհափառ Իշխանին պիտի ընծայեմ — կըսէր ինքը —զի նա մեծ հաճութիւն զգայ երբ մեր պարտէզներն ու դաշտերն լաւ մշակենք:— Զանի պալատը տարաւ և իշխանը նորա աշխատութիւնը երեք ոսկի տալով վարձատրեց:

Նոյն գիւղին մէջ ուրիշ երկրագործ մ' ալ կընակէր, որ խիստ փառասէր բնութեան տէր անձ մ' էր:

Նա այս դէպքն իմանալով ըսաւ. — Իմ մեծ հորթս Իշխանին կընծայեմ. նա եթէ շողգամի մը համար երեք ոսկի տուաւ որքան առաւել պիտի զիս վարձատրէ գեղեցիկ հորթիս համար: —

Արդ հորթին վիզն չուան մը կապելով պալատը տարաւ զանի և խնդրեց որ Իշխանը հաճի իր նուէրն ընդունիլ: Իշխանըն զայս ագահ մարդը լաւ ճանչելով չուզեց ընդունիլ զայն: Սակայն երկրագործը կպաղատէր իր նուէրն չմերժել: Հուսկ յետոյ Իշխանը ըսաւ. — Բարի քանի որ կստիպես զիս նուէրդ ընդունիլ, սիրով կզիջանիմ ձեր խնդրոյն, ձեր բարեսրտութեանը չեմ կրնար ապերախտ գտնուիլ, ուստի վարձ մը կուզեմ տալ զոր ինձ ձեր հորթին կրկնապատիկը արժած է —: Զայս ըսելով շողգամը նորա տուաւ. իսկ նա զայրանալով և դժգոհութեամբ հեռացաւ:

———

## ԱՅՐԱՍՊԱՆ ԿԻՆ ՄԸ

Բժիշկ մը գերեզմանատան մէջ ժողոդար: Գերեզմանապահը նոր գերեզման մը կփորէր, և հողին մէջէն մեռելի մը գլուխը գտնելով մէկ կողմ նետեց զանի:



Բժիշկն զանի գետնէն վերցնելով սկսաւ նկատել զանի, և տեսաւ որ նորա ականջին վերոքը գամ մը մխուած էր: Կամացուկ մը զանի դուրս քաշելով թաշկինակին ծայրը կապեց և գերեզմանապահին հարցուց թէ արդեօք կրնա՞յ իրեն ըսել թէ որու՛ կվերաբերի այն գըլուխը: — Գինեվաճառի մը — ըսաւ նա — անպիտան գինեմոլ մ՚ էր նա, երեկոյ մը չափէն աւելի արբած լինելով հետևեալ առաւօտուն մահիճին մէջ մեռած գըտնուեցաւ: —

— Նա ամուսնացա՞ծ էր — հարցուց բժիշկը:

— Այո — ըսաւ գերեզմանապահը:

— Նորա կինը դեռ ո՞ղջ է:

— Այո՛:

— Ի՞նչպիսի անձ մ՚ է նա:

— Խիստ բարի կին մ՚ է նա. միայն թէ նորա դրացիներն վրան կասկած ունին զի էրկանը մեռնելուն հետևեալ օրն ամուսնացաւ նա: —

Այս ծանօթութիւնները բաւական էին բժշկին համար, նա ուղղակի կնոջը տունը գնաց, և նորա բազում հարցմունները ընելէն զկնի երկանը ինչ հիւանդութեամբ մեռնիլն իմանալ ուզեց: Կինը գերեզմանապահին տուած ծանօթութիւններն իրէն տալով բժիշկը թաշկինակին ծայրի կապը արձակելով դամը երեւան հանեց և վեհանձն ձայնիւ — կին — ըսաւ — ճանաչե՞ս զայս դամը: — Կինը այս հարցմանս վերայ այլայլեցաւ և խոստովանեցաւ թէ ինքն էր երկանը սպաննիչն: Դատաստանը սոյն կինը մահուան դատապարտեց:

Գաղտնի և թագուն գործուած բազում յանցանքներ անշուշտ օր մը յայտնի պիտի ըլլան:

---

## ՍԱՐԴ ԵՒ ՃԱՆՃ

Երիտասարդ իշխան մը շատ անգամ կը զարմանար թէ Աստուած ճանճերն ինչ նպատակաւ ստեղծած ըլլալու է. քանզի մարդկանց համար նոյա ամենափոքր օգուտը չէր տեսներ և թէ կարող լինէր ամենն 'ի միասին պիտի ջնջեր յաշխարհէ: Օր մը մեծ պատերազմէ մը ետև նոյն իշխանն պարտաւորուեցաւ թշնամեաց երեսէն ծածկել զինքը, և անտառ մ'երթալով ծառի մը տակ պառկեցաւ և հոգնած լինելով խոր քնոյ մէջ ինկաւ: Թշնամեաց զինւորներէն մին անկէց անցնելով թուրն քաշեց և իշխանն պիտի սպաննէր եթէ նոյն միջոցին ճանճ մը նորա ոտքն խայթելով զանի չարթնցներ: Տեսնելով իր վտանգը, ցատկեց իշխանը և զինուորն ալ փախաւ:

— Նոյն գիշերը իշխանը անտառին քարանձաւներէն մէկը քաշուեցաւ պառկելու համար. գիշերը սարդ մը անոր մուտքին վրայ իր ոստայնը լարեց: Երկու զինւոր զինքը կը փնտռէին, առաւուն հոն հասան որոնց խօսակցութիւնը իշխանը լսեց:

— Տե՛ս — կպօռարմին — , անշուշտ այն այրին մէջ պահուած ըլլալու է .
— Ոչ — կըսէր միւսը , — անհնար է դա , զի եթէ այրը մտած լինէր սարդին ոստայնը պատռած պիտի ըլլար : —

Երբ նոքա հեռացան անկէց Իշխանը աչքերն և ձեռքերն յերկինս վերցուց և Աստուծոյ այսպիսի բարերարութեան համար շնորհակալ եղաւ որ երէկ կեանքը ճանճի մը և այսօր դարձեալ սարդի մը միջոցաւ ազատեց և ճանչցաւ որ Աստուծոյ ճամբաներն և գործքերն կատարելապէս բարի և իմաստուն են :

———

## ԱՂԻՒՍ

Ենովքը օր մը իր հօրը տանը քով շինուելու վրայ եղող մեծ շէնք մը կը դիտէր : Գործաւորք աղիւս և ցեխ կը բերէին և զանոնք իրարու յարմարցնելով գործն յառաջ կը տանէին : Հայրը ըսաւ նորա , — Ենովք , կը տեսնեմ որ ամեն օր մեծ աշխատութեամբ որմնագործներուն աշխատութիւնը կնկատես . անոնց արհեստն սովրի՞լ կը բաղձաս արդեօք : —



— Ոչ , հայր իմ — ըսաւ Ենովք ծիծաղելով . — կխորհէիմ թէ աղիւսներըն ո՛րքան փոքրիկ բաներ են , և իրարու վրայ դրուելով մեծամեծ շէնքեր կը ձեւացնեն : —

— Խորհուրդդ խիստ ուղիղ է , տղաս — ըսաւ հայրը — ընաւ չմոռնաս զայս : Բոլոր մեծամեծ գործքերն ալ այս ընթացքով կը կատարուին : Քու բոլոր ուսմունքդ իրարու վրայ դրուած փոքրիկ դասերէ կը բաղկանայ : Մարդ մը եթէ կամի աշխարհիս չուրջն պտըտիլ քայլ առ քայլ կըլլայ : Բոլոր կեանքըդ փոքրիկ մանրերորդներէ կը բաղկանայ : Փոքր կաթիլները , մեծ ծովեր կը կազմեն , աւազի հատերը լեռներ կը շինեն : —

Տղա՛յք, սորվեցէ՛ք փոքրիկ բանե-րըն զանարգել։ Սորվեցէ՛ք նաեւ մեծ աշխատութեանց պատճառաւ չյուսահատիլ։ Ամենամեծ աշխատութիւնն դիւրանայ մասերու բաժնելով։ Լեռան մը վրայէն չես կարող ցատկելով անցնիլ. քայլ առ քայլ կրնաս նորա միւս կողմն անցնիլ։ Մի՛ երկչիր մեծ գործերէ, խորհէ՛ միշտ որ մեծամեծ շէնքերն աղիւս մ'աղիւսի վրայ դնելով կկազմուին։

— — —

## ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Միայնակեաց մարդ մը անտառի մը մէջ կպտտէր։ Յանկարծ նորա միտքը խորհուրդ մ'եկաւ. մտածեց և դարձեալ մտածեց. վերջապէս ծառի մը ճիւղ փըրցնելով իր անունը — ԼԱՒՐԷՆՏԻՈՍ — նորա վրայ փորագրեց և տուն դառնալով փորագրած տառերը մելանով կօծէ եւ թուղթի վրայ կտպագրէ։



Ասկէ 10 տարի չափ ետեւ Կութթէնպէրկ Ստրազպուրկի մէջ մետաղեայ տառերով տպագրել սկսաւ։ Այս գիւտն կատարելագործուեցաւ 1449 ին երբ նա Յովհաննէս Ֆաուստուսի հետ ընկերացաւ, և 1455 Կութթէնպէրկի Լատիներէն Աստուածաշունչն տպագրութեամբ հրատարակուեցաւ։

Լաւրէնտիոսի մտաց մէջ ծագած այն փոքրիկ խորհուրդը այժմեան դարուս հասնելով զօրութիւն մ'է եղած որ աշխարհս չէ կարող նորա նմանը ցոյց տալ։

— — —

## ԱՐՔԱՅ ԺՈՂՈՎՐԴԱՍԷՐ

Գէորգ Բ. Անգղիոյ թագաւորը ծառային հրամայած էր ամառնային եղանակին պալատին պարտէզը հասարակաց զուարճութեանը համար միշտ բաց պահել: Ծոյլ ծառան նեղութենէ ազատելու համար կզանգատէր թագաւորին թէ հասարակութիւնը պարտէզին ծաղիկները կփրցնէ :

—Ի՞նչ—ըսաւ թագաւորը — ժողովուրդս այդքան ծաղի՞կ կսիրէ . օ՛ն ուրեմն նոցա զուարճութեանը համար այլ եւ ծաղիկ տնկէ :



## ԿԱՆՈՆՔ ՔԱՂԱՔԱՎԱՐԱԿԱՆ

Վարմունք ընտանեկան . Ծնողացդ հետ յարաժամ ակնածական կերպով խօսէ . նոցա պատուիրանացը անմիջական և կամայ հնազանդութիւն ցոյց տուր , առանց վիճաբանելու և դժկամակելու :

Ցաւալի է որ տղայք բուռն իրենց ընտանեաց վերաբերեալ ընկերաց հետ շարունակ խօսել կեանք կանցնեն , կնային որ յանձանք մը դանեն անպիտան և չընչին նիւթերու վրայ վիճելու :

Հանդերձներդ մաքուր պահէ , և ջանա նոցա որ և է կերպով վնաս չտալ . մարմինդ ալ շարունակ մաքրութեան վարժեցուր և կօշիկներուդ տունը անմաքրութիւն մի բերեր :

Վարմունք 'ի Սեղան : Ձեռքերդ և երեսդ լուացած և մազերդ սանտրած ըլլայ երբ սեղան կուգաս : Կարգիդ սպասէ և բաժինդ առ առանց դանդաղելու . բան մը

ուղած ատենդ քաղցր ձայնով խնդրէ և շնորհակալութիւնդ յայտնէ ։

Սեղանին վրայ շատ մի խօսիր. այլոց խօսակցութիւնը մի ընդմիջեր ։ Այլ որ-ղայոց հետ այնքան ազատ մի խօսակցիր որ ուրիշներն չարգիլուին ։

Մարդու պէս նստէ, բազուկներդ մի տարածեր, սեղանին վրայ մի կռթներ, դանակն, դգալն կամ պատառաքաղն վեր մի առներ ։ Ուրիշին երեսը կամ կերակուրին վրայ պշած աչօք մի նայիր ։ Սեղանին փուշն մ'աղտոտեր, վրադ կերակուր մի թափեր. մի հազար, մի թքը-ներ և քիթդ մի խնջեր կերակրոյ ատեն. զզուելի բաներ մի ըներ ։

Վարմունք ՚ի Փողոցի ։ Սրիկայութեան նշան է երբ տղայ մը փողոցներէն երգելով, քարնետելով, վայրենիշունման վազելով, այլ տղայոց պոռալով կամ կառքերու ետեւէ կախուելով կանցնի ։

Քեզմէ մեծ անձանց հետ քալած ատենդ զանոնք միշտ աջ կողմդ ունեցիր



երեք հոգի եղած ատեն պէտք է ամենէն տարուօքն մէջտեղէն քալէ ։

Վարմունք ՚ի Դպրոցի ։ Դպրոց երթալէդ առաջ նայէ որ ձեռքերդ և երեսդ մաքուր ըլլան, հանդերձներդ և կօշիկդ վրձինեալ և մազերդ սանտրած ։ Ջանա որ ճիշդ դպրոցին սկսուելուն հոն ներկայ ըլլաս, ասով ոչ դուն ետկմնաս ոչ ալ ընկերներդ կարգիլուին ։

Դպրոցը մտած և երեկոյին ետ դարձած ատենդ դասատուիդ արժան եղած յարգանքն տուր ։

Ուղղակի տեղդ գնա, առանց աղմուկ հանելով ուրիշներուն արգելք լինելու. դասերուդ մտադիր լեր, և պատուական ժամերդ ՚ի զուր կամ խաղով մ'անցներ ։

Եթէ դասատուէն բան մը կուզես քաղցր ձայնով և յարգական կերպով ըսէ ։ Ընկերակիցներուդ հետ սիրով վարուէ, նոքա ալ անշուշտ քու հետդ նոյն կերպով պիտի վարուին, եթէ ոչ հետերնին գործ չունիս ։ Դպրոցին մէջ

պատահածն դուրսը մի պատմեր, տղու մը պատիժն և յամառութիւնը մի ծաղր աներ։ Աղքատ մը կամ բնական պակասութեանց տէր անձ մը ծաղրելով տրտմեցնելն գերեզմանի նման պաղ և դառն է։ Մականուններ կամ ածականներ մի գործածեր։

Հոգաբարձուաց գալուստը դիտել եկած տունը դասերդ թողլով նոցա երեսն մի նայիր քերն թէ մարդ տեսած չունենայիր, այլ գործիդ պարապէ։

Դաս տուած տունդ մի չարժիր և տեղ մը կրթնելով հոս հոն մի նայիր։

Վարմունք 'ի խաղ։ Կրքի տէր տղայոց հետ ընկեր մի լիներ. վատ խօսքերու և ագահի սովորութեանց վարժ ընկերք միշտ վնասակար են։

Երբ խաղ մը առանց կռուոյ անհնար է վերջացնել լաւագոյն համարեա թողուլ զանի։ Եթէ ընկերներէդ մին խաբեբայութիւն կընէ հեռացիր անկից։ Թէ խաղի և թէ դրամի նկատմամբ խաբեբայութիւնը



անիրաւութիւն է։ Նայէ որ գետնին վրայ ծունր չդնես կամ չնստիս որ հանդերձներդ չվնասուին և պաղ չառնես։ Լողալն լաւ բան է սակայն վտանգաւոր. ուստի առանց ծնողացդ կամ ուսուցիչներուդ հրամանին չըլլայ որ ծով մտնես։ Խաղը զուարճութեան համար է ուստի պէտք է զանի զուարճալի ընել։

## ՀԱՅԿ ԵՒ ԲԵԼ

Օր մը Հայկ իր խրճիթն նստած,
Որդիքն, թոռներն շուրջը ժողուած,
Կը խրատէր զԱստուած պաշտել,
Եւ կուռքերու չծառայել։
Մէյ մ՚ ալ խրճիթին դուռն բացուի,
Խոլոտ հսկայ մ՚ հոն երեւի.
Նա էր Բելայ խրկած դեսպանն,
Եւ հրաւիրեր որ Հայք երթան
Բելայ միայն երկրպագեն
Ինչպէս համայն ազգերն ընեն։
Հայկ՝ առ Աստուած իր յոյսն դրած
Աջ թեն դէպ ՚ի յերկինս ուղղած
Կըսէ — Տէրոջըդ իմաց տուր.
Թող չյուսայ խոլտան ՚ի զուր
Որ Հայք թողլով Տէրն Եհովան
Բելայ երկրպագելու գան։
Բելայ դեսպանն ետ կդառնայ
Հայկայ խօսքերը իմաց կուտայ.



Զայրանալով Բել զօրք ժողուէ
Հայոց վերայ կռուի ելլէ։
Հազարաւոր աղեղնաւոր
Հետը առած Բէլ թագաւոր.
Կպաշարէ առանն Հայկայ,
Մահ և կործանում կսպառնայ։
Իսկ Հայկ՝ որդիքն, արի թոռներն,
Հաւատարիմ՝ քաջ ծառաներն,
Գլուխն ժողուած դաշտը ելլայ
Որ հալածէ գունդերն Բելայ։
Ճակատամարտն սկիզբը կուտայ.
Նետեր տեղան Հայոց վերայ.
Բայց քաջըն Հայկ աղեղն լարէ
Ձայն ճիշդ Բելայ կուրծքին ուղղէ.
Նետն սլանայ ՚ի սիրտն Բելայ —
Զաստուածն անշունչ, մեռեալ կիյնայ.
Իսկ Հայկ փոքրիկ բանակն ժողուած
Տունը դրած օրհնէ զԱստուած։

## ԿԻՅՈՄ ԵՒ ՆԱՊՕԼԷՕՆ

յամ

Սպանիացիք արքայ ընտրեն
Լէօբօլտ ֆօն Հօհէնձօլէրն.
Նաբօլէօն զայս լսելով
Կը խռովի զայրանալով.
Պէնէտէթին Պէրլին խրկէ
Որ այս գործը շուտ արգիլէ։
Կիյօմ Արքայն չէր ի Պէրլին.
Յէմս տրտօրայ Պէնէտէթին.
Հոն զԿիյօմն ջերմուկն գտնէ,
Խրոխտաբար նորա կըսէ.
— Սպանիացիք արքայ չընե՞ն
Լէօբօլտ ֆօն Հօհէնձօլէրն.
Եթէ ա՛յն անձն իշխան ըլլայ
Նաբօլէօն քեզ պատիժ տայ։—
— Բարի—բաւ ծերն թագաւոր
— Սպանեօլք ինձ չեն հարկաւոր.
Ո՛վ որ ընտրեն իրենց իշխան
Նորա թող գահն և թագը տան.



Ես այս գործին չեմ խառնուիր
Նաև անկից բան չեմ շահիր։—
Պէնէտէթին Բարիզ երթայ
Նաբօլէօնին զայս իմաց տայ.
Նա ալ կըսէ — Գնա՛ նորէն
Եւ պահանջէ ծեր Կիյօմէն
Որ գրութեամբ ինձ խոստանայ
Թէ Լէօբօլտ չըլլայ արքայ։—
Դեսպանն նորէն Էմս կվազէ
Եւ Կիյօմէն թուղթ մը կուզէ.
Նա ալ կըսէ — Գործի՛դ գնա՛
Խաղալիք չէ Գերմանիայ։—
Նաբօլէօն կզայրանայ.
Բոլոր բանակն ոտքի ելլայ.
Միթրայէօզներ և Շասբօներ,
Գաղղիացիք և Թուրքօներ
Բանակ կազմած սահմանն վազեն
Որ Գերմաններն անհետացնեն։
Իբրև մի մարդ Գերմանիայ
Ծեր Կիյօմին հետ միանայ.
Նա ալ Պիզմարքն, Մօլթքէն առած
Եւ բանակին գլուխն անցած

Գաղղիացւոց լաւ դաս մը տայ ,
Բոլոր աշխարհ կ՚սքանչանայ .
Քաղաք և գիւղ , ամուր բերդեր ,
Եւ բազմաթիւ հրազէններ ,
Երեք հարիւր հազար գերի ,
Նաև թշուառ Այրն Սէտանի,
Գերմանեայ փոխատէրութեն
Եւ հոն բանտերը կդրուին :
Իսկ երբ Բարիզ՝ պարծանքն երկրի
Ռմբակոծուի և պաշարուի
Գաղղիացիք ներում խնդրեն
Եւ հաշտութիւնն կստորագրեն .
Հինգ միլիար ֆրանք կուտան
Գերմանիացիք ետ կդառնան :

4038

6,68

0008547

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0008547